

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«29» հոկտեմբերի 2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 10-ի N 11 որոշումը՝

«Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յոդիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Վարդգես Իսախանյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Աղասի Հովհաննիսյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ավագ Գաբրիելյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Բագրատ Մարգարյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի գյուղական համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ոստիկանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, մշակույթի, կրթության, հողօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, առևտրի և ծառայությունների, արտակարգ իրավիճակների, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև


հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.


4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մալիշկայի գյուղական համայնքի ղեկավարին:

Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)



/ստորագրություն/

Աղասի Հովհաննիսյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն

Յողիկ Բաբայան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Վարդգես Իսախանյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Ավագ Գաբրիելյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Սմբատ Խլիսարյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Բագրատ Մարգարյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Արամ Կոստանյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/


Նարինե Մաղաքյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Մհեր Մովսիսյան (Մալիշկայի գյուղական համայնքի ղեկավար)


/ստորագրություն/

2014 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

Մալիշկայի գյուղական համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p>			<p>✓ Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը և մշակվել է</p>	<p>Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը չի մշակվել, չեն կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 824-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, համաձայն որի պետք է մշակել բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p>	<p>առաջարկվել է մշակել միջոցառումների պլանը համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ</p>	<p>մինչև 31.05.15թ</p>
<p>2. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>			<p>✓ պլանը չի մշակվել հայտեր չեն ներկայացվել</p>	<p>Պլանը չի մշակվել, Չեն պահպանվել ՀՀ կառավարության 10.06.2011թ. N 919-Ն որոշման պահանջները, ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշում, կետ 7</p>	<p>Առաջարկվել է մշակել պլանը սահմանված կարգով, առաջարկվել է ներկայացնել անհրաժեշտ հայտեր</p>	<p>մինչև 31.05.15թ</p>
<p>3. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>		<p>✓ /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել</p>		<p>Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ, չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p>	

		« արտակարգ իրավիճակների նախարարություն/»				
4. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում			V Համայնքի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն	Չեն պահպանվել «Հատկապես 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները	Առաջարկվել է համայնքի ապագա զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ	

Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ 6-րդ հոդվածի 2-րդ մաս. բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության և հաստատություններում, անկախ դրանց կազմակերպչական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին՝</p>			V «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով»:	Դրույթի պահանջները պահպանված չէ, չեն պահպանվել Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները. այն է «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով»՝ համաձայն որի անհրաժեշտ է իրազեկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողներին	Առաջարկվել է այսուհետ խստագույնս պահպանել դրույթի պահանջները	1 ամիս

<p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժամկետներում:</p> <p>11-րդ հոդվածի 1-ին մաս Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգաձույթյան և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին:</p>			<p>սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորությունների մասին</p>		
<p>2. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.</p> <p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար ջլոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.</p> <p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p>	<p>V</p> <p><<Հայաստանի Հանրապետության պետական և իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից,</p>		<p>Թեքահարթակ չկա՝ համայնքապետարանում և մշակույթի տանը, <u>չեն պահպանվել</u> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Առաջարկվել է թեքահարթակ կառուցել</p>	<p>1 ամիս</p>

	հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանն երի ստեղծում ը>>:				
--	--	--	--	--	--

Հավելված 3. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ>>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս
2. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը>>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը

			թերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:			
3. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը >>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս
4. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:			V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչներին մասնակցության կարգը >>:	Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշում	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս
5. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:			V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:	Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս
6. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:			v Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության	Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս

<p>7. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:</p>		<p>կարգը</p> <p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>ընդունում աշխատակազմի գործառնության կարգի վերաբերյալ</p> <p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>8. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>9. Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում:</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները:</p>	<p>Դրույթի պահանջը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ նշյալ դրույթի պահպանման ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը</p>
<p>10. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

<p>վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p>		<p>ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>կետի, 54.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը</p>		
<p>11. ՀՀ պետական բյուջեի հիման վրա ճշտված դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանների հաստատված լինելու առկայություն:</p>	<p>V <<Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային և համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները>>:</p>		<p>Դրույթի պահանջը թերի է պահպանված, <u>Թերի են պահպանվել</u> <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները; այն է համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի եռամսյակային համամասնությունները սահմանված են, սակայն սահմանված կարգով հաստատված չեն</p>	<p>Առաջարկվել է ապահովել դրույթի պահանջների ամբողջական կատարումը</p>	<p>1 ամիս</p>
<p>12. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:</p>	<p>V Գնումների գործընթացի կապակցությամբ կազմվում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>		<p><u>Թերի են պահպանվել</u> ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168-Ն որոշման պահանջները, այն է գնումների գործընթացի կապակցությամբ եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները կազմված են թերություններով</p>	<p>Առաջարկվել է գնման գործընթացի եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները կազմել սահմանված կազմի համապատասխան</p>	<p>1 ամիս</p>

Հավելված 4. Մշակույթի բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	թվերի և լիկերի քանակությամբ	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Համայնքի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացման նպատակով համայնքի ղեկավարը ՀՀ մարզպետարան է ներկայացնում մշակույթի ոլորտի ծրագրեր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում ներառելու համար: Ներկայացված ծրագրերը պետք է համահունչ լինել մշակույթի ոլորտի նպատակային, ռազմավարական ծրագրերին, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրերին և գերակա խնդիրներին:</p>			<p>V Համայնքի ղեկավարը մարզպետարան չի ներկայացրել մշակույթի ոլորտի ծրագրեր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում ներառելու համար</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, 2են պահպանվել «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի, հոդված 24-ի, կետ 1)-ի պահանջները</p>	<p>Առաջարկվել է մարզպետարան ներկայացնել համապատասխան ծրագրերը</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվար</p>
<p>2. Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները սահմանված կարգով կազմում են բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը. Սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգով, ինչպես նաև ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն հաստատված ընթացակարգով:</p>			<p>V Տեղական ինքնակառավարման և մարմինները սահմանված կարգով չեն կազմել բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, 2են պահպանվել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի, հոդված 11-ի, ա) կետ-ի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ հաստատված ընթացակարգի պահանջները:</p>	<p>Առաջարկվել է միջոցներ ձեռնարկել դրույթի պահանջների պահպանման ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվար</p>
<p>3. Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները հուշարձանների պահպանական գոտիներում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի է</p>			<p>V Տեղական ինքնակառավարման և մարմինները հուշարձանների պահպանական գոտիներում հողի, համայնքի</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, 2են պահպանվել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթը խստագույնս պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվար</p>

<p>օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմին:</p> <p>Սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգով:</p>		<p>սեփականություն համարվող հուշարձան-շենքերի եւ շինությունների սեփականատերերի եւ օգտագործողների հետ հուշարձանների պահպանության պայմանագիր չեն կնքել</p>	<p>միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի, հոդված 11-ի, թ) կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի պահանջները</p>		
---	--	---	---	--	--

Հավելված 5. Հողօգտագործման բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները:</p>			<p>V</p> <p><<Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները>>:</p>	<p>Հաշվառման համապատասխան գրքերում հաստատված տվյալները լրացված չեն, <u>չեն պահպանվել</u> Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Լրացնել հաշվառման գրքերը սահմանված կարգով</p>	<p>Մինչև 30.12.2014 թվականը</p>